# 40. ԻՐԻԿՄ ՈՒՆԻՄ    МУЖЕНЕК У МЕНЯ



## ԻՐԻԿՄ ՈՒՆԻՄ

Ծաղխու սարեր, պէտ-պէտ քյարեր,
Տա̈լ չլո̈ւցիր, արեվն առիր.
Սանդ կըծիծիմ քյի խըսացու,
Բա̈լա̈քյ կատուն մէջ մըսացու:
Խիօ, խիօ, խանէ, խանէ:
Սանդ կըծիծիմ, կյարի խուս ի,
Քյա̈նի ծիծիմ, բէնամուս ի:
Սանդիկ հընդի, ծիծօղ ջընդի,
Սանդիկ ուռ ի, ծիծօղ ծուռ ի:
Խիօ, խիօ, խանէ, խանէ:
Իրիկմ ունիմ շորէ շինած,
Մա̈չ բա̈դա̈նին կանի խինած,
Բա̈ժն ի կօլօտ, կուզիկ-մուզիկ,
Զա̈նեմ կօտին իլնի թըզիկ:
Խիօ, խիօ, խանէ, խանէ:
Էս իրիկուն կիրա̈կմուտ ի,
Իրիկմ ունիմ խավու ճուտ ի,
Կըպըտպըտա, կըկըտվըտա,
Տարէքյ փա̈րգյա̈խ թըխ կուտ ուտի;
Խիօ, խիօ, խանէ, խանէ:

Сканировано с CamScanner

Իրիկմ ունիմ տեղին-մեղին,
Վավ ըոր տիսնի՝ պատռի լեղին,
Ծեռնէն պըռնիմ, տամ կյըրօղին,
Թըղնիմ էրթամ խատ սիրօղին:
Խհօ, խհօ, խանէ, խանէ:
Իրիկմ ունիմ՝ քյանց կըռնի կոճ,
Ձատըմ ունի՝ քյանց մըկան պոչ,
Նա ձի կըպի, նա՜ յէմ տալոչ,
Թըղ տանին տան ճոչ տանդըկնոչ:
Խհօ, խհօ, խանէ, խանէ:
Կէսօր իրի, բէրի կյախ ի,
Սըվտակ կըթոց թեվիս կախ ի,
Էկան ասին՝ իրկանց մախ ի,
Աշկըս կըլա, սիրտս ուրախ ի:
Խհօ, խհօ, խանէ, խանէ:

Сканировано с CamScanner